ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«04» նոյեմբերի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

2009 թվականից Հայաստանում նոյեմբերի 4-ը նշվում է որպես սոցիալական աշխատողի օր:

Սոցիալական աշխատողի աշխատանքը դժվարին և պատասխանատու առաքելություն է, որը պահանջում է անմնացորդ նվիրում, սրտացավություն և բարձր պատասխանատվություն:

Իրենց աշխատանքի կենտրոնում պահելով մարդու իրավունքների պաշտպանությունն ու մարդակենտրոն վերաբերմունքը՝ սոցիալական աշխատողներն անգնահատելի գործունեություն են ծավալում կյանքի ծանր պայմաններում հայտնված ընտանիքներին, բազմաբնույթ խնդիրներ և կարիքներ ունեցող քաղաքացիներին օգնելու համար:

Սոցիալական ոլորտի հարգելի աշխատակիցներ, դուք մեր պետության այն ներկայացուցիչներն եք, ում նկատմամբ վստահությունը ձևավորում է նաև վստահություն մեր պետության սոցիալական պաշտպանության նկատմամբ:

Հոգատար վերաբերմունքով, պատասխանատվության բարձր զգացումով շարունակեք իրականացնել ձեր առաքելությունը:

Մաղթում եմ բոլորիդ առողջություն, անձնական և աշխատանքային հաջողություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ